ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ք. ԵՐԵՎԱՆ «12» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025Թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 664-Ա
«ԱԴԵԼ ՇԻՆ» ՍՊԸ-ԻՆ, «ԴԻ ՕՀՄ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ԻՆ, «ԱՄՎԱ» ՍՊԸ-ԻՆ և «Ա.Գ.Ս.Մ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով 2025 թվականի սեպտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից կազմակերպված «ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-55/25» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 21-ի և նոյեմբերի 25-ի թիվ 2 և թիվ 3 արձանագրությունները և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) և բ) ենթակետերով նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով,

ՊԱՐԶԵՑԻ

1. «ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-55/25» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում գնման ընթացակարգի գնահատման փուլում արձանագրվել էր, որ նվազագույն գին առաջարկած «Ադել Շին» ՍՊԸ-ն փոխկապակցված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Կիր-Քար» ՍՊԸ-ի հետ և ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակում: Ուստի՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 121-րդ կետով «Կիր-Քար» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելը ինքնաբերաբար հանգեցնում է «Ադել Շին» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակմանը:

2. «Ամվա» ՍՊԸ-ի և «Դի Օհմ Էներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում ապրանքի ամբողջական նկարագրում տեխնիկական բնութագիր սյունակը լրացված է թերի: Ուստի առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ «Կարգ») 41-րդ կետով և «ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-55/25» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.9 կետով՝ մասնակցներին առաջարկվել է ծանուցման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցների կողմից շտկում չկատարելու հիքմով՝ «Ամվա» ՍՊԸ-ի և «Դի Օհմ Էներջի» ՍՊԸ-ի հայտերը գնահատվել են անբավարար և մերժվել են: Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ *«մասնակցի կողմից սահմանված ժամկետում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելը կամ ամբողջական չշտկելը հանդիսանում է գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, որը հանգեցնում է գնման գործընթացին վերջիններիս հետագա մասնակցության դադարեցմանը:»* Կարգի 32-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ *«եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը (պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը) չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում»*: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 21-րդ մասի համաձայն՝ *«գնումների բազային միավոր՝ մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ»*: Տվյալ դեպքում Հրավերով նախատեսված ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գինը նախատեսվել է 11.000.000 ՀՀ դրամ, ուստի Կարգի 32-րդ հոդվածի հիմքով հայտի ապահովում ներկայացնելու անհրաժեշտությունը բացակայել է: Վերոնշյալ հարցի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարությունը Գնման գործընթացների վերաբերյալ պատվիրատուներից հաճախակի ստացվող հարցադրումների և դրանց վերաբերյալ տրամադրված պարզաբանումների 50-րդ կետով հայտնել է հետևյալ դիրքորոշումը՝ *«եթե կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում կիրառելի չէ հայտի ապահովման ներկայացման պահանջը և այդ ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած՝ պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ապա այդ դեպքում տվյալ*

մասնակցի նկատմամբ կարող է կայացվել գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշում՝ հաշվի առնելով նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ սահմանված կարգավորումը»:

Հաշվի առնելով այն, որ «ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-55/25» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը և կիրառելի չէ հայտի ապահովման ներկայացման պահանջը ինչպես նաև այն, որ վերոնշյալ ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «Ամվա» և «Դի Օհմ Էներջի» ՍՊ ընկերությունները թույլ են տվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որը հանգեցրել է գնման գործընթացին մասնակիցների հետագա մասնակցության դադարեցմանը և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության վերոնշյալ պարզաբանումը՝ կարող ենք փաստել, որ առկա են բավարար հիմքեր Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի կարգավորումներով վերջիններիս գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

3. «ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-55/25» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ընտրված մասնակից էր ճանաչվել «Ա.Գ.Ս.Մ» ՍՊԸ-ն, սակայն սահմանված ժամկետում ընտրված մասնակցի կողմից չի ներկայացվել «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի բ) ենթակետի համաձայն և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետի 6, 7, 8-րդ ենթակետերով պահանջվող քաղաքաշինության բնագավառի համապատասխան լիցենզիաները: Մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել հրավերով նախատեսված փաստաթղթերը ինչպես նաև հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին «Ա.Գ.Ս.Մ» ՍՊԸ-ի կողմից սույն թվականի սեպտեմբերի 30-ին ներկայացված հայտը մասնավորապես Դիմում հայտարարությունը /Հավելված 1-ը/ չի համապատասխանել իրականությանը, ինչը ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի իմաստով հանդիսանում է գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում և հիմք է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ)

ենթակետի համաձայն վերջինիս գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 121-րդ կետով, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով և Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով՝

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Ներառել սույն որոշման հավելվածում ներկայացված աղյուսակում նշված մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Որոշման պատճենը սահմանված կարգով տեղադրել «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքում և 1 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել մասնակիցներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հավելված «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
12.12.2025թ-ի թիվ 664 որոշման

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն
ծածկագիրը	չափաբաժնի համարը	չափաբաժնի անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/	Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
«ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-55/25»	1	Արևային ֆոտովոլտային կայան	11.000.000	«Ադել Շին» ՍՊԸ	05555787	ՀՀ, ք. Գյումրի 217/012 տնակ	21.10.2025 թ.	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ	ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 121-րդ կետ և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետ	
				«Դի Օհմ	00152889	ՀՀ, ք. Երևան,			ՀՀՓԿ-ԳՀԱՊՁ	

				Էներջի» ՍՊԸ		Ալեք Մանուկյան 15Ա			Բ-55/25» ծածկագրով հրավերի 8.11 կետ և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետ	
				«Ամվա» ՍՊԸ	01066181	ՀՀ, ք. Երևան Բրյուսով թաղ, 64շ., բն 5				
				«Ա.Գ.Ս.Մ» ՍՊԸ	04721702	ՀՀ, ք. Փարաքար, Կոմունայի 4/2	25.11.2025		ՀՀՓԿ-ԳՀԱՊՁ Բ-55/25» ծածկագրով հրավերի 8.11 կետ և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32- րդ կետի 19-	

									րդ ենթակետ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետ	

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

0023, ք. Երևան, Արշակունյաց պող. 23,
հեռ՝ (010) 44 11 36, ֆաքս՝ (010) 58 15 74,
թեժ գիծ՝ (010) 30 00 11,
էլ. կայք՝ justexpert.am, էլ. փոստ՝ info@justexpert.am